ԳԻՒՄՐԻ. ԴԱՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԴԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ՈՒՐՈՒԱԳԻԾ

ԼԵՒՈՆ ԼԱՃԻԿԵԱՆ (levon.lachikyan55@gmail.com)

ՄՈՒՏՔ

Հազարամեակների պատմութիւն ունեցող հայկական այս բնակավայրի նորօրեայ ժամանակագրութիւնն ակամայ բաժանւում է երկու շրջանի. մինչեւ 1988 Դեկտեմբի երկրաշարժը եւ՝ դրանից յետոյ: Նոյնիսկ Հայաստանի անկախացումն ի զօրու չեղաւ փոփոխութիւն մտցնելու նշուած ջրբաժանի մէջ. այնքա՜ն խորն էր ցաւն ու անչափելի՝ պատճառուած վնասը ... Այո՛, 1988ի բնական աղէտը պատուհասեց Հայաստանի հիւսիսային ողջ հատուածը՝ որպէս կիզակէտ ունենալով Գիւմրի քաղաքն իր ենթակառոյցներով ու բնակելիներով: Աւերուեց վերջիններիս 70%ը՝ պատճառ դառնալով տասնեակ հազարաւոր զոհերի ու անհաշուելի ճակատագրերի խեղման:

17 Յուլիս 2022. Գիւմրիում կազմակերպուած փառատօն

Այդուհանդերձ Հայաստանի «մշակութային մայրաքաղաք» համարուող Գիւմրին երկրաշարժին յաջորդած տարիներին ոչ միայն տոկաց ու շտկեց իր մէջքը, այլեւ նոր յաջողութիւններ գրանցեց մարդկային գործունէութեան գեղարուեստական բնագաւառում: Աւելին, ի շարս այլեւայլ հանգամանքների՝ ոգու կորով, կենսասիրութիւն, նպատակասլացութիւն, աշխատասիրութիւն եւն., նաեւ մշակոյթն ու դրա առանցք հանդիսացող նորին մեծութիւն արուեստն օգնեցին գիւմրեցուն դիմագրաւելու անյաղթահարելի թուացող շատ դժուարութիւններ ու մարտահրաւէրներ:

Ականատեսն ու վկան, դոյզն-ինչ նաեւ մասնակիցը լինելով յետերկրաշարժեայ ու անկախութեանը յաջորդած այդ 30ամեայ ընթացքին (1991-2021)[1], ստորեւ կը փորձեմ ներկայացնել Գիւմրիի մշակութային կեանքի այդ ժամանակահատուածի համապատկերը, վերջինիս վայրիվերումներն ու ելեւէջները, կրած փոփոխութիւններն ու զարգացման միտումները:

ՄԻ ՔԻՉ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Գեղեցիկի հանդէպ անբացատրելի ու նախաստեղծ սէր կայ Կումայրի-Ալեքսանդրապոլ-Լենինական-Գիւմրիում[2]: Ի տարբերութիւն մայրաքաղաք Երեւանի՝ այստեղ պահպանուած են այդ գեղեցիկն իրենց մէջ կրող հնակառոյցները եւ քաղաքի պատմական միջուկն ընդհանրապէս: Վերջինս դէպի իրեն է ձգում հազարաւոր հայորդիների ու օտարերկրացիների ինչպէս աշխարհի բոլոր ծագերից, այնպէս էլ ՀՀ տարբեր մարզերից:

Արագածից դէպի հիւսիս ընկած Շիրակի սարահարթի այդ տարածքը բնակեցուած է եղել դեռեւս Ք.ա. Գ. հազարամեակում: «Կումայրի» անուանման յիշատակութիւն կայ թէ՛ Մարմաշէնից ոչ-հեռու գտնուած Ք.ա. Ը. դարի ուրարտական մի արձանագրութեան մէջ («Իրդանիունի»)[3], թէ՛ Ղեւոնդ պատմիչի մօտ (774թ.)[4] եւ թէ՛ յետագայ շրջանի բազմաթիւ գրաւոր աղբիւրներում ու տարեգրութիւններում[5]:

Գիւմրին քաղաքի կարգավիճակ ստացել է 1837ին միայն, երբ հաստատուել է նրա առաջին յատակագիծը, համահունչ՝ ժամանակի քաղաքաշինական սկզբունքներին եւ ի մասնաւորի «*ռուսական կայսրութիւնում տարածում ստացած ուղղանկիւն-կանոնաւոր յատակագծման քաղաքաշի-*

---

[1] 30ամեայ վաղեմութեան հայաստանեան մշակութային տարեգրութեան վաւերական շատ դրուագներ մէկտեղուած են մեր հրատարակած *Անլոյս օրերի ոգեղէն ղօղանջներ* գրքում (հրատ. ԳԱԹ, Երեւան, 2004):

[2] Սրանք քաղաքի տարբեր անուանաձեւերն են տարբեր ժամանակներում (հին եւ միջին դարերում՝ Կումայրի, մինչեւ 1837ը ու նաեւ հիմա՝ Գիւմրի, 1837-1924՝ Ալեքսանդրապոլ եւ 1924-90՝ Լենինական), *Հայաստանի համառօտ հանրագիտարան, հտր. 2*, Հայկական հանրագիտարանի գլխաւոր խմբագրութեան հրատ., Երեւան, 1995, էջ 750:

[3] *Գիւմրի. Gyumri. Гюмри* ալբոմը՝ հրատարակուած Գիւմրին ԱՊՀ երկրների 2013ի մշակութային մայրաքաղաք հռչակելու կապակցութեամբ, Գիւմրի, Էլդորադօ հրատ., 2013, էջ 3:

[4] Կարինէ Բազէեան, Գրիգոր Աղանեան *Ալեքսանդրապոլ. ազգագրական էսքիզներ (պատմա-ազգագրական ուսումնասիրութիւն)*, ՇՀՀ կենտրոնի հրատ., Գիւմրի, 2015, էջ 5:

[5] *Կումիրի* անուամբ բնակավայրի մասին տեղեկութիւն կայ, օրինակ, 1209 թուակիր մի ձեռագիր յիշատակարանի մէջ, որը թողել է Յովասափ անունով մի հոգեւորական. «*Ես մեղուցեալ եւ յետինս ի կրօնաւորս Ովասափս, որ էի ազգաւ եւ տոհմիւ ի մեծ գեաւքաղաքէն Կումիրոյ...*» (Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռագիր թիւ 1886):

նական սկզբունքին»[6]: Նոյն տարուայ Հոկտեմբերին քաղաք է ժամանում Ռուսաստանի կայսր Նիկոլայ Ա.ը, որը ոչ միայն մասնակցում է սուրբ նահատակ Ալեքսանդրա թագուհու անունը կրող ռուսական ուղղափառ եկեղեցու հիմնարկէքին, այլեւ քաղաքը վերանուանում Ալեքսանդրապոլ:

Վերջինս նկատելի աշխուժութիւն է ապրում՝ շնորհիւ Ադրիանապոլսի պայմանագրի (1829 Սեպտեմբեր) կնքմանը յաջորդած Արեւմտեան Հայաստանի տարբեր վայրերից՝ Կարինից, Կարսից, Մուշից, Բասէնից ու Բայազէտից գաղթած վերաբնակների[7]: Նրանք էլ, շարունակելով Արեւմտեան Հայաստանի շինարարական հարուստ աւանդոյթները, կազմաւորում են բնակավայրի անշփոթելի ճարտարապետական դիմագիծը[8]: Տարբեր առումներով այն ժառանգորդն է նաեւ քաղաքամայր Անիի[9], ուստի կորուսեալ ***Էրգիր***ի կարօտը մերօրեայ ՀՀում հենց նրանից ենք առնում…

Ընդհանրապէս, գիտական գրականութեան մէջ ընդունուած է Կումայրի-Ալեքսանդրապոլ-Լենինական-Գիւմրին դիտարկել մի կողմից իբրեւ «Արեւմտեան Հայաստանի մանրակերտ» կամ «արեւելահայ ու արեւմտահայ մշակոյթների իւրատեսակ խառնարան»[10], միւս կողմից՝ աւանդական-հայկականի եւ դրսեկ-միջազգայինի (առաւելապէս՝ ռուսական եւ եւրոպական) «արժէքների ու տարրերի յաջող խառնուրդի լաւագոյն օրինակ»[11]:

ԺԹ. դարակէսից Ալեքսանդրապոլ-Գիւմրին արդէն բարեկարգ քաղաք էր՝ իր մէկը միւսից տպաւորիչ կառոյցներով, եկեղեցիներով եւ լայն ու լուսաւորուած փողոցներով: Նոյն դարավերջին *«իր տնտեսական համախառն արդիւնքով ու քաղաքային եկամուտներով այն շրջանցում է նահանգային կենտրոններին (Երեւան, Ելիզաւէտպոլ, Բաքու)՝ ընդհուպ մօտենալով Թիֆլիսին»*[12]:

---

[6] Սաշուր Քալաշեան, «Կումայրի. պետական պատմա-ճարտարապետական արգելոց-թանգարան», *Ճարտարապետութիւն եւ շինարարութիւն*, 7-8:2021, էջ 16:

[7] Բազէեան, Աղանեան, էջ 3-4, 7:

[8] 1830ի գարնանը սկսուած եւ Յունիսին իր բարձրակէտին հասած արեւմտահայերի ներգաղթի ժամանակ Արեւմտեան Հայաստանից ներգաղթած 14,000 ընտանիքներից 3491ը հաստատուել է Շիրակում՝ դառնալով ապագայ Ալեքսանդրապոլի քաղաքային բնակչութեան հիմնական կորիզը (Ա. Հայրապետեան, *Արեւելեան Շիրակը XIX դարի առաջին կէսին*, Գիւմրի, 2005, էջ 80):

[9] Պատահական չէ, որ 2001ին հաստատուած Գիւմրիի նոր զինանշանի վերին հատուածում պատկերուած է Բագրատունիների մայրաքաղաք Անիի գլխաւոր մուտքից, ինչպէս նաեւ այս արքայատոհմի դրօշից յայտնի յովազի խորհրդանիշը՝ մէջքին խաչ ու վարգի պահին:

[10] Բազէեան, Աղանեան, էջ 5:

[11] Նոյն:

[12] Գրիգոր Աղանեան «Ալեքսանդրապոլի քաղաքային տնտեսութեան զարգացման հիմնական միտումները (XIX դարավերջ-XX դարասկիզբ)», *ՇՀՀ կենտրոնի Գիտական աշխատութիւններ,* X:2007, Գիւմրի, էջ 77:

Հարկ է ընդգծել, որ դարերի արձագանգը պահպանուել է այսօրուայ Գիմրիում: Հին քաղաքն, իսկապէս, թանգարան է բաց երկնքի տակ: Այն եղել ու շարունակում է մնալ հարիւրից աւելի արհեստների եւ արուեստների կամ, ինչպէս ընդունուած է ասել, «Վարպետաց» քաղաք: Բարեբախտութիւն էր քաղաքիս համար ***«Կումայրի» պեփական պատմաճարտարապետական արգելոց-թանգարանի*** ստեղծումը 1980ի Օգոստոսի 5ին՝ նպատակ ունենալով ուսումնասիրել ու վերականգնել հնօրեայ բնակավայրի պատմամշակութային հարուստ ժառանգութիւնը, ինչպէս նաեւ գիտականօրէն հետազօտել ու հանրահռչակել այն[13]: Ըստ 2004 Սեպտեմբերի 9ի ՀՀ կառավարութեան թիւ 1270 որոշման, 1170 շէնք ու շինութիւն է ներառուել յիշեալ արգելոցի պահպանման գօտու մէջ:

Այդ հնակառոյցներից մէկում՝ Արեւմտեան Հայաստանի Ձիթող գիւղից գաղթած Պետրոս Ձիթողցեանի կառուցած (1872) երկյարկանի շէնքում (Յաղթանակի պող., 47) 1984ից գործում է ***Գիմրու ժողովրդական ճարտարապետութեան եւ քաղաքային կենցաղի թանգարան***ը, որի ցուցասրահներում ներկայացուած են 1860-1920ականներն ընկած ժամանակահատուածի Ալեքսանդրապոլի առաւել տարածում գտած արհեստները, հասարակական կենցաղն ու հոգեւոր մշակոյթը: Այդտեղ վերականգնուած են նաեւ գիւմրեցի արհեստաւորի եւ ունեւոր խաւի բնակարանների ներքնատեսքը: Իսկ ցուցասրահներից մէկում ցուցադրւում է ԺԹ. դարի Գիւմրիի հիմնական փոխադրամիջոցը՝ ֆայտոնը:

Վերոյիշեալ արգելոց-թանգարանի հիմքի վրայ ստեղծուած ***Գիմրու պատմութեան թանգարան***ը[14] 2019ից սկսեց գործել համայնքապետարանի շէնքում՝ իր պահոցներում ներառելով 12,000 թանգարանային ցուցանմուշ: Ինքնատիպ ցուցադրութիւնը, ինչպէս թանգարանի տնօրէն Ինգա Աւագեանն է նշում[15], ընդգրկում է «*Քաղաքի պատմութիւնը՝ սկսած Ք.ա. Դ. հազարամեակից մինչեւ Ալեքսանդրապոլեան շրջանը*»: Այն ներառում է նմուշներ քաղաքի տարածքում պեղուած յուշարձանների պատմական նիւթերից, զանազան քարտէզների, հնատիպ գրքերի, ասեղնագործ, ոսկէ ու արծաթէ իրերի, գորգերի ու կարպետների հաւաքածուներից:

Հարկ է նշել, որ ՀՀ ԳԱԱ Շիրակի Հայագիտական Հետազօտութիւնների Կենտրոնի (ՇՀՀԿ) կողմից արդէն 10ից աւելի միջազգային գիտաժո-

---

[13] Աւելի մանրամասն՝ *Ճարտարապետութիւն եւ շինարարութիւն*, 7-8:2021, էջ 16-27:

[14] Թանգարանի մասին պատմող տեսանիւթը տե՛ս՝ https://www.facebook.com/206937043356877/videos/797744534362412 :

[15] http://ardi.am/%d5%bf%d5%a5%d5%bd%d5%a1%d5%a4%d5%a1%d5%b7%d5%bf%d5%b8%d6%82%d5%b4-%d5%a3%d5%b5%d5%b8%d6%82%d5%b4%d6%80%d5%b8%d6%82-%d5%af%d5%b8%d6%82%d5%b4%d5%a1%d5%b5%d6%80%d5%ab-%d5%b6-%d5%a7/?fbclid=IwAR2t7yWP465g0tN--buelxynXJg83BVC4F7CXGy_pTkonG9E6Sg8CK836VQ :

ղովներ են կազմակերպուել՝ նուիրուած Շիրակի երկրագիտութեանն ու հայագիտութեան արդի խնդիրներին[16]:

Ամէնեւին էլ պատահական չէ, որ հայկական կինօնկարների կարեւոր մէկ մասը՝ *Հեղնար աղբիւր*, *Եռանկիւնի*, *Կտոր մը երկինք*, *Մեր մանկութեան տանգօն*, *Հին օրերի երգը*, *Ուրախ աւտօբուս* եւն., նկարահանուել են հենց Գիւմրիում, նրա ինքնատիպ ու գունագեղ անկիւններում: Յատկանշական է նաեւ, որ այսօր կառուցուող նոր շինութիւնները եւս շարունակում են հին Գիւմրուայ ոճը, որում գիրկընդխառն են եւրոպական դասականութիւնն ու ռուսական նորդասականութիւնը, Ի. դարասկզբի արդիականութիւնն ու խորհրդային ձեւապաշտութիւնը: Եւ այդ բոլորը՝ գիւմրեցի հմուտ վարպետների ձեռամբ ու անուրանալի ճաշակով: Նրանք այնպիսի վարպետութեամբ են համադրել այդ ամէնը, որ ստեղծել են նոր ու անկրկնելի ազգային բնիկ միջավայր:

ԿԵՐՊԱՐՈՒԵՍՏ

Գեղարուեստական այդ միջավայրն է, որ ծնունդ է տուել բազում արուեստագէտների՝ բանաստեղծներ Աւետիք Իսահակեան եւ Յովհաննէս Շիրազ, աշուղներ Շերամ ու Ջիւանի, երաժիշտներ Նիկողայոս ու Արմէն Տիգրանեաններ, Գէորգի Գիւրջիեւ, բեմի նշանաւոր վարպետներ Վարդան Աճէմեան ու Միեր Մկրտչեան եւ անթիւ նկարիչ-քանդակագործներ[17]:

Լինելով Հայաստանի ամենաբազմազգ բնակավայրը (գերակշռող հայերի հետ այս քաղաքում կողք-կողքի ապրել են թուրքեր, յոյներ, ռուսներ եւ հայ գնչուներ)՝ նոյն միջավայրն իր մէջ է առել նաեւ քաղաքի տարբեր ազգերի ներկայացուցիչներին՝ ձեւաւորելով «գիւմրեցի» կոչուող հաւաքական հանրոյթը: Լաւագոյն օրինակներից է Գիւմրիում ծնուած մեծ քանդակագործ, Երեւանում, Մոսկուայում եւ այլուր տեղադրուած բազմաթիւ յուշարձանների հեղինակ, ազգութեամբ յոյն Սերգէյ Մերկուրովի[18] կեանքն ու գործունէութիւնը: Նա իր կեանքի վերջում հետեւեալն է խոստովանել. «*Ես օխտը (եօթ - Լ.Լ.) պորտով գիւմրեցի եմ, ու մէջս ինչ հունար կայ, Գիւմրուայ հող ու ջրէն է: Ախր մեր էդ օրհնուած քաղաքը խուդոժնիկ (նկարիչ - Լ.Լ.) քաղաք է. ինտեղ առանց հունարի մարդ չես գտնի*»[19]:

---

[16] Իւրաքանչիւր գիտաժողովում ընթերցուած գիտական զեկուցումներն այնուհետեւ հրատարակուել են Կենտրոնի *Գիտական աշխատութիւններ*ում՝ խմբագրութեամբ Սերգօ Հայրապետեանի:

[17] Այդ միջավայրն էր նաեւ, որ ինձ մղեց ստեղծելու գծանկարչական թերթերի «Գիւմրի, իմ սէր» նկարաշարը, որտեղ փորձել եմ նոր հայեացք ապահովել հին քաղաքին (*Գիւմրի, իմ սէր*, «Էդիթ Պրինտ» հրատ., Երեւան, 2018. նաեւ՝ Մ. Բաղալեան *«Հին քաղաքի նոր սէրը»*, *Հարթօնք բացառիկ*, 2009, էջ 34-36):

[18] Մանրամասն տե՛ս՝ *Հայաստանի համառօտ հանրագիտարան, հտր. 3,* Հայկական հանրագիտարանի գլխաւոր խմբագրութեան հրատ., Երեւան, 1999, էջ 691:

[19] Աղաւնի, *Միշտ կանչող ձայներ*, Սովետական գրող, Երեւան, 1983, էջ 183:

Գիւմրու նշանաւոր Եօթ վէրք եկեղեցին

Հենց Մերկուրովի անունն է կրում ***Գիւմրու նկարչական դպրոց***ը, որը հիմնադրուել է 1921ին եւ եղել Անդրկովկասի առաջին գեղարուեստական ուսումնական հաստատութիւնը[20]: Մինչ օրս տուած շուրջ 3000 շրջանաւարտներից թուարկենք միքանի անուն՝ Ռաֆայէլ Աթոյեան, Յակոբ Անանիկեան, Մարիամ ու Երանուհի Ասլամազեաններ, Էդուարդ Արծրունեան, Խաչատուր Եսայեան, Արտաշէս Հունանեան, Հրաչեայ Ռուխկեան, Կարապետ Տիրատուրեան եւն.: Նրանք եւ նրանց տաղանդաւոր աշակերտ-յետնորդները վրձնել եւ այսօր եւս վրձնում են այս անզուգական քաղաքի զգլխիչ պատկերները՝ անխառն սէր փոխանցելով դէպի այն:

Դպրոցի 100ամեայ յոբելեանին ընդառաջ քաղաքի համայնքային միջոցներով դպրոցական շէնքի նկուղային հատուածում ամիսներ տեւած շինարարական աշխատանքներից յետոյ բացուեց քանդակի դասարան, որը մերթընդմերթ կը ծառայի նաեւ որպէս ուսանողական ցուցասրահ: Վերջինիս մէջ 2021ի Դեկտեմբերին հանդիսաւորապէս նշուեց գեղարուեստական այդ դարբնոցի մէկդարեայ յոբելեանը:

1988ի երկրաշարժի օրերին նշեալ կրթական հաստատութեան տնօրէնն էր ՀՀ վաստակաւոր նկարիչ Սամուէլ Լաճիկեանը, որն ԱՄՆ տեղափոխուելուց 20 տարի անց վերադարձաւ հայրենի քաղաք՝ լծուելով նորահաս սերնդի գեղագիտական դաստիարակութեան գործին: Մեր զրոյցում[21], յիշելով 1988ի չարաբաստիկ Դեկտեմբերի 7ի օրը, նա նկատեց. «*Հիմնանորոգումից յետոյ նոր էինք մուտք գործել ընդարձակ ու լուսաւոր շէնք, երբ վրայ հասած ստորգետնեայ ցնցումները աւերեցին այն: Մինչ այդ մտածում էինք 10ամեայ գեղարուեստական ուսուցման անցնելու ուղղութեամբ եւ շէնքի բակում ազատել էինք լրացուցիչ տարածքներ խեցե-*

[20] *Հայաստանի համառօտ հանրագիտարան, հտր. 2*, էջ 758:

[21] Մէջբերում 2021 Օգոստոսի 10ին կայացած զրոյցից:

ղէնի ու քանդակի դասարանների համար»: Ուշագրաւն այն է եղել, որ ընդամէնը միքանի ամիս անց մերձակայքում գտնուող քաղաքային զբօսայգում՝ փայտեայ տնակների մէջ, վերսկսուել են նկարչութեան դասերը: Ընդ որում՝ աւելի շատ աշակերտներով...

Հետաքրքիր էր լսել գիւմրեցի գեղանկարիչ Սամուէլ Գալստեանին, ով միքանի տարի ղեկավարել է ուսումնական այդ կառոյցը եւ պաշտօնավարութեան աւարտից յետոյ եւս չի կարողացել կտրուել աշակերտներից: Քաղաքի ծայրամասի իր ժամանակաւոր տնակում, իր շուրջն է խմբել տասնեակ պարման-պարմանուհիների՝ անցկացնելով նկարչական պարապմունքներ: «*Դասերի ժամանակ յաճախ եմ դաշնամուր նուագում*,- պատմում է զրուցակիցս[22],- *թէ՛ երաժշտութիւնը, թէ՛ ընթերցանութիւնը փոխում են երեխաների կեանքը*»: Սամուէլի սաները 2018ին գեղարուեստական ցուցահանդէս են կազմակերպել՝ վաճառելով բոլոր նկարները: Թերեւս պատահական չէ, որ նրա կացարանը տեղացիները կատակով համարում են Հայաստանի «ամենամշակութային *դոմիկ*ը (տնակը - Լ.Լ.)»:

...Երկրաշարժից յետոյ քաղաքային պատկերասրահը դադարել էր գործելուց՝ վթարային լինելու պատճառով: Ու թէեւ շատ նկարիչներ էին անտուն մնացել՝ յարատեւել է գեղարուեստական կեանքը: Նրանք ոչ միայն շարունակել են ապրել կիսաւեր քաղաքում, այլ նաեւ արարել են: Այդ անկասելի մղումն էր, որ նրանցից շատերին բերեց-յանգեցրեց քաղաքի պատկերասրահի հին շէնքը վերականգնելու գաղափարին. «*Էլ չսպասեցին վերեւից ինչ-որ օգնութեան. իրենց սեփական ուժերով վերակառուցեցին եւ ճաշակով ձեւաւորեցին վթարուած շէնքի մի հատուածը՝ այն վերածելով գործող ցուցասրահի*»[23]:

Ուրախալի է, որ 2020 Սեպտեմբերի 5ի Գիւմրու օրը համայնքապետարանի առաջին յարկի ընդարձակ սրահը տրամադրուեց քաղաքի ստեղծագործողներին՝ որպէս համայնքային նոր ***Պատկերասրահ***[24]: Այդ աշխատանքները համակարգում է հաւաքորդ Արտուշ Մկրտչեանը, ով ցուցահանդէսների կազմակերպման եւ արուեստագէտների հետ աշխատանքի երկարամեայ փորձ ունի: Դեռ 1991ին նա հիմնեց նորանկախ ՀՀի առաջին մասնաւոր թանգարանը՝ «Սթիլ», փաստօրէն վերջ դնելով պետական մենաշնորհին նաեւ կերպարուեստի ոլորտում[25]: 2019ից այն վերածուեց ***գծանկարչութեան թանգարան***ի, որի մշտական ցուցադրութիւնը ներառում է 19 երկրների հայ նկարիչների 5-600 ստեղծագործութիւններ:

---

[22] Մէջբերում 2021 Յուլիսի 4ին կայացած զրոյցից:

[23] Լեւոն Լաճիկեան «Նոր ցուցասրահ Գիւմրիում», *Ազգ*, 10 Սեպտեմբերի 1992:

[24] Յղումը՝ https://www.facebook.com/206937043356877/videos/392008005117907 :

[25] Լեւոն Լաճիկեան «'Սթիլ'ը մայրաքաղաքում», *Ազգ*, 12 Յունիսի 1993:

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Գիւմրին իրապէս թանգարանային քաղաք է, որի միայն մէկ՝ Վարպետաց փողոցի վրայ ու դրա մերձակայքում գտնւում են գրչի ու խօսքի երեք վարպետների՝ Իսահակեանի, Շիրազի եւ Մկրտչեանի թանգարանները:

Մեծ վարպետի՝ ***Աւետիք Իսահակեանի տուն-թանգարան***ը (Վարպետաց փող., 91) հնագոյնն է: Այն գործում է 1975ից, մեծ քնարերգուի հայրական տանը, որտեղ վերականգնուած են բանաստեղծի աշխատասենեակը, Իսահակեանների հիւրասենեակը, ննջասենեակը, խոհանոցը, մառանը եւ թոնրատունը: Թանգարանում կարելի է ծանօթանալ ոչ միայն բանաստեղծին առնչուող մասունքներին, այլեւ ԺԹ. դարի վերջին քառորդի ունեւոր գիւմրեցու կենցաղին եւ նիստուկացին:

Յովհաննէս Շիրազի յուշատուն-թանգարանը հիմնադրուել է 1983ին՝ ԺԹ. դարում կառուցուած իւրատիպ միայարկ շէնքում: Այստեղ պահպանւում եւ ցուցադրւում են Գիւմրիում ծնուած մեծանուն բանաստեղծի անձնական իրերը, ձեռագրերը եւ տպագիր գործերը:

Իսկ ***Մեր Մկրտչեանի թանգարան***ը համեմատաբար նոր է եւ սկսել է գործել, 2006ից դարձեալ ԺԹ. դարավերջին կառուցուած պատմաճարտարապետական արժէք ներկայացնող շէնքում (Ռուսթաւելու փող., 30): Այստեղ ցուցադրւում են մեծ դերասանի բեմական հագուստներն ու տարբեր ֆիլմերում օգտագործած իրերը:

Այցելուների քանակով նրանց ամէնեւին չի զիջում ***«Մարիամ եւ Երանուհի Ասլամազեան քոյրեր» պատկերասրահ***ը՝ հիմնադրուած 1987ին: Այստեղ ցուցադրւում են երկու քոյր արուեստագէտների շուրջ 600 ստեղծագործութիւն՝ գեղանկար, խեցեղէն եւն.: Թանգարանի երկյարկանի շէնքը 1880ի կառոյց է, որտեղ մշտական ցուցադրութեանը զուգահեռ պարբերաբար կազմակերպւում են թեմատիկ ժամանակաւոր ցուցահանդէսներ: Այստեղ միաժամանակ անցկացւում են «Ասլամազեանական մոտիւներով» դասընթացներ՝ առանցքում ունենալով տաղանդաւոր քոյրերի խեցեգործական առարկաների պատրաստման հմտութիւնների ուսուցումը:

Իդէպ, վերջին շրջանում քաղաքում առանձնակի զարկ է տրւում խեցեգործութեանը, որի վկայութիւնը **Հայկական աւանդական խեցեգործութիւն** հետազօտական կենտրոնն է եւ նորաստեղծ ***խեցեգործութեան թանգարան***ը[26]:

Մշակութային այս քաղաքում գեղարուեստական աւանդոյթների պահպանման ու զարգացման առումով նշանակալի էր յատկապէս 1997 թուա-

[26] Այն ստեղծուել է՝ նախաձեռնութեամբ ու ջանքերով Գիւմրիում Իտալիայի Հանրապետութեան պատուոյ հիւպատոս Անտոնիօ Մոնտալդոյի: Նա անուրանալի վաստակ ունի Գիւմրու գեղեցկութիւնների յայտնաբերման ու արժեւորման գործում: Նա միաժամանակ հիմնադիրն ու սեփականատէրն է «Villa Kars» հիւրանոցի, որը սպասարկման նոր մշակոյթ հաստատեց Գիւմրիում:

կանը, երբ բացուեց տեղի ***Արուեստների ակադեմիան***: Այն արդիւնք էր նշանաւոր խմբաւար, Գիւմրու պատուաւոր քաղաքացի Լորիս Ճգնաւորեանի՝ 1991ին կատարած աննախադէպ ուխտագնացութեան[27]: Այդպէս հնարաւոր եղաւ ժողովրդից հանգանակուած, ինչպէս եւ Հայաստան համահայկական հիմնադրամի ու ՀԲԸՄ տրամադրած գումարներով 1997ին հիմնել Երեւանի գեղարուեստի պետական ակադեմիայի, Կոմիտասի անուան պետական կոնսերվատորիայի (ԿՊԿ) եւ Երեւանի կինոյի ու թատրոնի պետական ինստիտուտի (ԵԿԹՊԻ) Գիւմրու մասնաճիւղերը[28]:

Վերջինս, օրինակ, սկզբնապէս ունէր ընդամէնը մէկ՝ դերասանական բաժին, 11 սաներով: 2002ից սկսեալ այդտեղ բացուեցին բեմադրական, նկարչական ձեւաւորման, հեռուստատեսութեան եւ կինոօնկարահանման արուեստ բաժինները, 2004ից՝ պարի բաժինը: Մեր զրուցակից, յիշեալ մասնաճիւղի դոցենտ, ՀՀ մշակոյթի վաստակաւոր գործիչ Սիրանուշ Ղուկասեանը բացատրեց. «*Մինչեւ 2020թ. Կինոյի եւ թատրոնի պետական ինստիտուտի Գիւմրու մասնաճիւղն աւարտել է 450 ուսանող, որոնք աշխատում են ինչպէս Գիւմրիում ու յարակից բնակավայրերում, այնպէս էլ Երեւանում*»[29]: Իսկ ըստ ԿՊԿի Գիւմրու մասնաճիւղի տնօրէն Յասմիկ Յարութիւնեանի, իրենց «*ԲՈՒՀը պատրաստում է պրոֆեսիոնալ երաժիշտ կատարողներ, ինչպէս նաեւ մանկավարժներ՝ երաժշտական դպրոցների ու այդօրինակ տարբեր հաստատութիւնների համար: Շրջանաւարտները հիմնականում աշխատում են Շիրակի մարզի տարբեր կրթօջախներում եւ մշակութային կենտրոններում*»[30]:

2022ին լրանում է յիշեալ 3 մասնաճիւղերի հիմնադրութեան 25ամեակը, որի կապակցութեամբ ողջ տարուայ ընթացքում կազմակերպւում են յոբելենական տարաբնոյթ միջոցառումներ, համերգեր ու գիտաժողովներ:

ԹԱՏԵՐԱՐՈՒԵՍՏ

Գիւմրեցիների՝ թէ՛ հին եւ թէ՛ նոր, բնորոշ յատկանիշերից է թատերասիրութիւնը, անթաքոյց սէրն առ բեմարուեստը: Թատերական առաջին ներկայացումները Ալեքսանդրապոլում զուգադիպել են հայ նոր թատրոնի սկզբնաւորմանը: Ի հակառակ տարածուած այն տեսակէտի, թէ «*Մինչեւ խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում չի եղել ոչ մի մշտական թատերախումբ, էլ չենք խօսում թատրոնի՝ բառիս լայն իմաստով*

---

[27] Լաճիկեան, *Անլոյս օրերի* էջ 176:

[28] Յիշենք, որ այս քաղաքում է տեղի ունեցել հայ ժողովրդի մտաւոր մշակոյթի նորագոյն պատմութեան կարեւորագոյն իրադարձութիւններից մէկը. 1919ի Մայիսի 16ին հիմնադրուել է Հայաստանի համալսարանը (*ԵՊՀ կենսագրական հանրագիտարան*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2019, էջ 5):

[29] Մէջբերում 2021 Մայիսի 20ին կայացած զրոյցից:

[30] Մէջբերում 2021 Յունիսի 18ին կայացած զրոյցից:

գործունէութեան մասին»[31]՝ յայտնի թատերագէտ Ռազմիկ Մադոյեանը, յենուելով ժամանակի թերթերի ու այլ վկայութիւնների վրայ, ապացուցեց, որ նոր շրջանի հայ թատրոնի ծնունդը տեղի է ունեցել հենց Ալեքսանդրապոլում 1865 Մայիսի 23ին, երբ տեղի նորաստեղծ թատերախումբը հանդիսատեսին է ներկայացրել *Շուշանիկ* պատմական ողբերգութիւնը[32]:

Ուշագրաւն այն է, որ նախաձեռնողը եղել է ռուսական բանակի հրետանու սպայ Ալեքսանդր Մելիքիայկազեանցը, իսկ բեմադրիչը՝ քաղաքագլխի պաշտօնատար Վաղարշակ Շահխաթունեանը: Թատրոն ստեղծելու համար անհրաժեշտութիւն է զգացուել հանգանակութիւն կատարել. «*Այստեղ է, որ ակնյայտ դարձաւ փոքրիկ քաղաքի բնակչութեան սէրը դէպի բեմը: Եւ աշխատաւորութիւնը իր սուղ միջոցներից թատրոնական գործին տրամադրում է 117 ռուբլի: Մելիք-Հայկազեանցն էլ իր գրպանից դնում է մի պատկառելի գումար*»[33]: Աւելացնենք, որ 1873ին Ալեքսանդրապոլում ստեղծւում է ռուսական թատերախումբ, որի անդրանիկ ներկայացումը լինում է Նիկոլայ Գոգոլի *Ռեւիզոր* (քննիչը) յայտնի կատակերգութիւնը[34]:

Հետաքրքիր եւս մի փաստ. սկզբնաւորուող նոր հայ թատրոնում սիրուած են եղել յատկապէս պատմահայրենասիրական թատերախաղերը: Այդ մասին տեղեկանում ենք Քաջբերունու (Գաբրիէլ Տէրյովհաննիսեան) հետեւեալ վկայութիւնից. «*Մեր ժողովուրդը, այնուամէնայնիւ, առանձին եռանդով սիրում է տեսնել բեմի վրայ մեր անցեալի պատմութեան պատկերները, մեր նախահայրերի կեանքը: Այդ երեւոյթը ապացուցուած է խորապէս շատ անգամ՝ գոնէ Աղեքսանդրապոլի վերաբերութեամբ*»[35]:

Նշուած ժամանակներից սկսած թատերասէր այս քաղաքում ձեւաւորուել է ոչ միայն ազգային թատերական մշակոյթ, այլեւ թատրոն յաճախելու մշակոյթը: Այսօր, հայ նոր թատրոնի ստեղծումից դարուկէս անց էլ, Գիւմրիում շարունակւում է մեծով ու փոքրով, ողջ ընտանիքով թատրոն գնալու սովորոյթը: Թերեւս սա՛ է գլխաւոր պատճառը տեղի թատրոնի տեւական յաջողութիւնների, որոնք հիմք են տուել հայ առաքելական եկեղեցու Շիրակի թեմի առաջնորդ Միքայէլ եպս. Աջապահեանին հետեւեալ կերպ արտայայտուելու. «*Վաղուց արդէն թատրոնը քաղաքի այցեքարտն է, ազատութեան ոգու կրողն ու արտայայտիչը, գիւմրեցու զգացմունքայնութեան եւ աննկուն հումորի ժառանգորդը*»[36]:

---

[31] *Թատրոնը ժողովրդին,* ՀԹԸ հրատ., Երեւան, 1960, էջ 5:

[32] Ռազմիկ Մադոյեան *Գիւմրու թատրոնը (1865-1965թթ.)*, «Դպիր» հրատ., Գիւմրի, 2017, էջ 10:

[33] Նոյն:

[34] Նոյն, էջ 11:

[35] Քաջբերունի, «Աղեքսանդրապոլ», *Մեղու Հայաստանի*, 19 Մարտի 1880:

[36] *Թատրոնը ժամանակի ափի մէջ*, կազմ.՝ Էիլիթ Թովմասեան, Տիգրան Գաբոյեան, Գիւմրի, 2015, էջ 5:

Տեղի թատերական կեանքի յիշատակելի դրուագներից առանձնացնենք նաեւ Արմէն Տիգրանեանի *Անուշ* օպերայի առաջնախաղը Ալեքսանդրապոլում 1912ի Օգոստոսի 4ին[37]: Դրան յաջորդել են անուանի դերասաններ Պետրոս Ադամեանի, Սիրանուշի, Յովհաննէս Աբէլեանի, Յովհաննէս Զարիֆեանի, Վահրամ Փափազեանի եւ շատ այլոց հիւրախաղերը: Ինչպէս կարդում ենք ***Գիւմրու պետական դրամատիկական թատրոն***ի 150ամեայ յոբելեանի առիթով հրատարակուած *Թատրոնը ժամանակի ափի մէջ* գրքոյկում՝ «*1930ականներին Լենինականի թատրոնն արդէն ձեւաւորուել էր որպէս ստեղծագործական առողջ օրգանիզմ, որը միաւորում էր տաղանդաւոր դերասան-դերասանուհիների՝ Արմէն Արմէնեան, Յոլակ Ամերիկեան, Լեւոն Զոհրաբեան, Գուրգէն Յակոբեան, Արուս Ասրեան, Արտաւազդ Փաշայեան եւ ուրիշներ*»[38]:

Անցած տարիներին թատերական այս օջախում իրար են յաջորդել նշանաւոր բեմադրիչներ Խորէն Աբրահամեանը, Վարդան Աճէմեանը, Նիկոլայ Ծատուրեանը, Երուանդ Ղազանչեանը, Ալբերտ Մկրտչեանը, Գրիգոր Մկրտչեանը, Յակոբ Ղազանչեանը, հրաւիրեալ այլ թատերական գործիչներ, որոնք նոր ձեռագրով ու հետաքրքիր թատերախաղերով լրացրել են թատրոնի խաղացանկը: Տարիներ շարունակ այն եղել եւ մնում է Երեւանի Գաբրիէլ Սունդուկեանի անուան ազգային ակադեմիական թատրոնի սնուցող երակը:

Այսօր թատրոնի գեղարուեստական ղեկավարն է Լիւդուիգ Յարութիւնեանը: Ըստ նրա, իրենց մօտ տարեկան 4-6 առաջնախաղ է տեղի ունենում, ամսական՝ 18 ներկայացում: Հետաքրքիր էր լսել, որ վերջին տասնամեակներին «*Թատրոնը մի՛շտ է աշխատել՝ թէկուզ նուազ հանդիսատեսով եւ ի հեճուկս մութ ու ցուրտ պայմանների*»[39]: Նոյնիսկ երկրաշարժից յետոյ այն չի դադարեցրել իր գործունէութիւնը՝ բեմ հանելով Սոփոկլէսի *Անտիգոնէ*, Շեքսպիրի *Միրոյ ապարդիւն ճիգեր*, Դերենիկ Դեմիրճեանի *Քաջ Նազար*, Եուջին Օ'Նիլի *Էրը ծփիների տակ*, Լեւոն Շանթի *Շղթայուածը* եւ հայ ու արտասահմանեան այլ թատերագիրների թատերախաղերը: Յարութիւնեանն ուրախ էր, որ շնորհիւ նորեկ դերասանների ու բեմադրիչների եւ յատկապէս ԵԿԹՊԻի Գիւմրու մասնաճիւղի շրջանաւարտների՝ նոր շունչ է մտել թատրոն, ապահովելով սահուն սերնդափոխութիւն: Աւելին՝ այսօր իրենք չունեն հանդիսատեսի խնդիր, եւ գրեթէ բոլոր ներկայացումները տեղի են ունենում լեփ-լեցուն դահլիճում:

---

[37] Թատրոնի պատմական հին շէնքի հիմքի վրայ 2020ին վեր խոյացաւ Գիւմրու «Թումո» կրթական-արհեստագիտական կենտրոնի նոր կառոյցը:

[38] Թովմասեան, Գաբոյեան, էջ 15:

[39] Մէջբերում 2021 Փետրուար 28ին կայացած զրոյցից:



Ձիթողցեանների բնակարանը եւ Villa Kars պանդոկը

Վերջին շրջանում յաջողուել է նաեւ հիւրախաղերի մեկնել Լիբանան, Ռուսաստան ու ԱՄՆ՝ ներկայացնելով իրենց լաւագոյն բեմադրութիւնները: Covid-19 համավարակն ու Արցախեան 44-օրեայ պատերազմն, անշուշտ, իրենց կնիքը դրեցին թատրոնի գործունէութեան վրայ, բայց նոյնիսկ մարտական թէժ գործողութիւնների ընթացքում բեմ հանուեց տաղանդաւոր դերասան Վարդան Պետրոսեանի *Վերելք* ներկայացումը: Չմոռանանք նաեւ Լիւդուիգ Յարութիւնեանի բեմադրած *Հարսանիք թիկունքում* թատերախաղը: Այն այնքան սիրուեց հանդիսատեսի կողմից, որ ֆիլմի վերածուեց՝ ցուցադրուելով երկրի բոլոր կինօթատրոններում: Գեղարուեստական ղեկավարի համոզմամբ՝ «*Արուստագէտն իրաւունք չունի յուսահատուելու: Շարունակելու՛ ենք խաղալ…*», հաստատական այս նախադասութեամբ աւարտուեց մեր զրոյցը:

Իդէպ, 2021ի Դեկտեմբերին բեմադրուած *Մաուգլի* ներկայացումը - ըստ Ռադիըրդ Քիփլինգի *Ջունգլիների գիրքը* ստեղծագործութեան – հանդիսացաւ վերջին տարիներին արուած աշխատանքի փառապսակը եւ առանձնացաւ մասնակիցների աննախադէպ քանակով՝ 60 դերասան: Այն գրաւեց հանդիսատեսին նաեւ արդիական շեշտադրումներով՝ պատմելով մարդու ու բնութեան ներդաշնակութեան կորստի, մարդկային արատների՝ դաւաճանութեան ու անհանդուրժողութեան մասին եւ կոչ անելով միասնականութեան ու համախմբուածութեան: Պատահական չէր ուստի, որ սոյն բեմադրութիւնը 2022ին «Արտաւազդ» թատերական ԻԱ. մրցանակաբաշխութիւնում արժանացաւ յատուկ մրցանակի:

Աւելացնենք, որ 2022ին եւս նախատեսուած է 5 նոր բեմադրութիւն, ի շարս որոնց Շիրվանզադէի *Արտիստը* եւ Շիլլէրի *Սէր ու խարդաւանք*ը:

Յիշատակելի մէկ այլ մշակութային իրադարձութիւն էր 2021 Նոյեմբերին Ֆրանսայում բնակութիւն հաստատած գիւմրեցի Նարինէ Սիմոնեանի նախաձեռնութեամբ ու երաժշտական ղեկավարութեամբ Գիւմրու մարզամշակութային կենտրոնի բեմ բարձրացուցած օպերային ներկայացումը՝ Անրի Պիւրսէլի *Էնէաս եւ Դիդօ*: Շատերն այդ առիթով յիշեցին, որ առաջին օպերային ներկայացման՝ *Անուշի* բեմադրութիւնից 109 տարի անց

երաժշտական այդ սեռը կրկին վերադարձաւ Գիւմրի՝ թատերասէրին ներկայացնելով բարոկկօ ոճի երաժշտութեան այդ գլուխգործոցը:

Քաղաքի նորօրեայ թատերական համապատկերի կարեւոր դրուագներից յիշատակենք 2019ին Դրամատիկական թատրոնի **Մեր Մկրտչեան** փոքր դահլիճի բացումը եւ ՀՀ վաստակաւոր արտիստ Յովհաննէս Յովհաննիսեանի՝ 2020ին հիմնած ***Մտորումների թատրոն***ը:

Գիւմրեցի փոքրիկներին այսօր շարունակում է հեքիաթներ պարգեւել Հայաստանի մանկական հնագոյն՝ 1935ից գործող ***Տիկնիկային թատրոն***ը, որը Արցախեան վերջին պատերազմից յետոյ իր տանիքի տակ հիւրընկալեց Շուշիի թատրոնի դերասան-դերասանուհիներին:

ԵՐԱԺՇՏԱՐՈՒԵՍՏ

Շիրակը պատմական Հայաստանի նաեւ երաժշտական մշակոյթի շտեմարաններից մէկն է եղել, որտեղ հնուց անտի զարգացած են եղել ինչպէս ժողովրդական, այնպէս էլ գուսանական երգատեսակները:

Եթէ հին ժամանակներում եւ միջնադարում Անին է եղել հայ երաժշտութեան զարգացման բարձրակէտը, ապա դրա անկումից յետոյ դարեր անց արուեստի այդ տեսակը զարթօնք ապրեց Անիին մերձակայ Կումայրի-Ալեքսանդրապոլում: Այստեղ գոյութիւն են ունեցել *«շուրջ 200 տարուայ անընդմէջ երաժշտական հարուստ աւանդոյթներ»*[40]: Ինչպէս իր մի անտիպ յօդուածում գրում է երաժշտագէտ Յասմիկ Յարութիւնեանը՝ «*Ասպիճանաբար քաղաքային կենցաղում կայունացաւ երգ-երաժշտութեան բազմաժանր համակարգ՝ 20րդ դարասկզբին ձեռք բերելով երաժշտաոճական տեղային յատկանիշեր: Կայունացաւ նաեւ Կարնոյ բարբառի Գիւմրու խօսուածքը, որը եղանակաւորուեց քնարական, հայրենասիրական, պատմական, օրօրոցային, կատակային, ինչպէս նաեւ ծիսական երգերում*»[41]:

Ալեքսանդրապոլն ապրում էր յագեցած երաժշտական կեանքով, որի անբաժան մասն էին աշուղները: Եւ եթէ աւանդաբար ու գերազանցապէս հայ աշուղները մինչ այդ ստեղծագործում էին թուրքերէն ու ադրբեջաներէն, ապա վարպետաց վարպետ (ուստաբաշի) ընտրուած Ջիւանին (1844-1909) յորդորում է բոլորին գրել գրական հայերէն երգեր՝ անձնապէս տալով դրա լաւագոյն օրինակը[42]: Ժամանակակիցները վկայում են, որ այդ գործում նրան աջակից է եղել հայ մեծանուն գրող Ղազարոս Աղայեանը, որն այդ տարիներին ուսուցչութիւն էր անում Գիւմրիում[43]:

---

[40] *Հայաստանի համառօտ հանրագիտարան, հտր. 2*, էջ 757:

[41] Յասմիկ Յարութիւնեան «Երաժշտական կեանքը Գիւմրիում» (անտիպ), էջ 1:

[42] Նոյն, էջ 17:

[43] Իդէպ, Աղայեանից բացի այս քաղաքում են ապրել ու ստեղծագործել նշանաւոր գրողներ Ատրպետն ու Մկրտիչ Արմէնը: Ի. դարասկզբին տեղական տպարաններում հրատարակուել են աշուղներ Ջիւանու ու Շերամի, բանաստեղծներ Իսահակեանի ու Աթաբէկ Խնկոյեանի, նշանաւոր բանաստեղծ Գարեգին Լեւոնեանի եւ

Խորհրդային Լենինականի առաջին տարիներին (1923-26) քաղաքի օպերա-օպերէտային թատրոնի բեմում ելոյթներ են ունեցել Շարա Տալեանն ու Հայկանուշ Դանիէլեանը, Ալեքսանդր Մելիքփաշաեան ու Լեւոն Իսեցկին: Հայերէնով բեմադրուել են Ժորժ Բիզէի *Կարմէն* եւ Շառլ-Ֆրանսուա Գունոյի *Ֆաուստ* օպերաները, Իմրէ Կալմանի *Սիլվա* օպերէտը, մանկական շատ օպերաներ[44]:

... Որքան էլ 1988ի երկրաշարժը մեծ հարուած հասցրեց Գիւմրուն ու նրա երաժշտական աւանդոյթներին, վերջիններս այս կամ այն կերպ գոյատեւեցին եւ նոր պայմանների համեմատ, թէկուզ փոխակերպուելով, շարունակեցին: Աւելին՝ դէպի Գիւմրի Ճգնաւորեանի ուխտագնացութիւնից հաւաքուած միջոցներով 1991ին ստեղծուած մշակոյթի կենտրոնի հովանու ներքոյ կազմակերպուեցին գեղարուեստական միքանի խմբեր[45], որոնք զգալի դեր կատարեցին մշակութային հարուստ աւանդոյթներ ունեցող այս քաղաքի հոգեւոր կեանքի աշխուժացման գործում եւ նոր դիմագծեր աւելացրին քաղաքի մշակութային դիմապատկերին: Այդ խմբերից մէկն էր «Անի» փողային նուագախումբը, որի գեղարուեստական ղեկավար Գէորգի Կոշտոյեանը հետաքրքիր դրուագ պատմեց տարիներ առաջ կայա-

---

հայ մշակոյթի շատ այլ գործիչների գեղարուեստական գրքերն ու երկասիրութիւնները: Գիւմրիում այսօր երկու հրատարակչութիւն կայ՝ «Դպիր» (հիմնադիր՝ Յովիկ Կարապետեան) եւ «Էլդորադո» (հիմնադիր՝ Համազասպ Պիչիկեան): Ըստ Կարապետեանի, տարեկան իրենք հրատարակում են 20 անուն գիրք՝ իւրաքանչիւրն առաւելագոյնը 300 տպաքանակով:

Տխուր է պատկերը նաեւ լրագրութեան ասպարէզում. Գիւմրիում այսօր ոչ մի օրաթերթ լոյս չի տեսնում: Սա այն դէպքում, երբ Ի. դարասկզբին այստեղ հրատարակուել են շուրջ 30 անուն պարբերականներ՝ հայերէն եւ ռուսերէն (Levon Lachikyan *Crossing Roads (A Journey through the Armenian World)*, Gasprint, Երեւան, 2012, էջ 15): Խորհրդային շրջանում յայտնի *Բանուոր* օրաթերթը հրատարակւում էր 21,500 տպաքանակով, մինչդեռ դրան փոխարինելու եկած *Կումայրի*ն՝ 16,000 տպաքանակով: Վերջինս դադարեց լոյս տեսնելուց 2014ին: Այսօր լրատուութեան դաշտում կայ ընդամէնը 1 տպագիր շաբաթաթերթ՝ *Շրջապատ*ը (խմբագիր՝ Եպրաքսիա Մեխակեան), որը հրատարակւում է արդէն 18 տարի, ինքնաֆինանսաւորմամբ: Յիշատակենք նաեւ *Եղէգան փող* գրական-մշակութային ամսաթերթը եւ *Շիրակ* գրական-գեղարուեստական, կրթամշակութային եւ հասարակական նորատիպ եռամսեայ հանդէսը (գլխաւոր խմբագիր՝ Սամուէլ Մարգարեան): Առցանց պարբերականներից նշենք *Ասպարէզ* շաբաթաթերթը, որը լոյս է տեսնում 2011ից Գիւմրու լրագրողների համանուն ակումբի նախաձեռնութեամբ, ինչպէս նաեւ միքանի կայքէջեր (ինչպէս՝ քաղաքի անցեալին ու ներկային առնչուող *Ալեքսանդրապոլ. Լենինական. Գիւմրի* Դիմատետրի ամենամեծ խումբը - հիմնադիր եւ համակարգող՝ Դերենիկ Մալխասեան):

[44] Աւելի մանրամասն տե՛ս՝ Լեւոն Լաճիկեան *Խաչուող ճանապարհներ*, Մուղնի հրատ., Երեւան, 2006, էջ 17:

[45] Դրանց մասին տե՛ս՝ Լաճիկեան *Անլոյս օրերի*, էջ 176-77:

ցած մեր մի զրոյցում. «*1991ին մեր խումբը հրաւիրուեց Ֆրանսիա՝ մասնակցելու «Եւրաշեփոր» (Վիլֆրանշ) եւ «Շեփորներ առանց սահմանի» (Մազամէթ) միջազգային փառատօներին: Շատերը տեսնելով մեր ծռմռուած երաժշտական գործիքները՝ սկզբում քթների տակ ժպտացին: Իսկ վերջում, ելոյթ ունենալուց յետոյ, մենք շահեցինք 2 մեծ մրցանակները*»[46]:

Հայաստանի ձեռք բերած անկախութեանը յաջորդած առաջին տարիներին, երբ արցախեան ռազմաճակատում մոլեգնում էր պատերազմը, իսկ երկրաշարժը բաց վէրք էր յիշեցնում Գիւմրու մարմնի վրայ, քաղաքն ուզեց ի հեճուկս ճակատագրի հարուածների իր ***Սիմֆոնիկ նուագախումբ***ն ունենալ: Ճիշտ է, տարիներ առաջ ստեղծուել էր նման համոյթ, սակայն որոշ ժամանակ անց լուծարուել էր: Նուիրեալների եւ առաջին հերթին ՀՀ արուեստի վաստակաւոր գործիչ Յասմիկ Կիրակոսեանի ջանքերով շատ կարճ ժամանակամիջոցում հնարաւոր եղաւ լուծել բարդագոյն մի խնդիր՝ հաւաքել արհեստավարժ երաժիշտների անհրաժեշտ կազմ: Բարեբախտաբար, Գիւմրիում կադրերի պակաս չկար: Եւ ցուրտ ու անլոյս քաղաքում սկսեցին տարածուել դասական երաժշտութեան հնչիւնները…

1993 Յուլիսի 1ին սիմֆոնիկ նուագախմբին տրուեց պետական կարգավիճակ: Միաժամանակ Գիւմրի հրաւիրուեց հմուտ երաժիշտ եւ յայտնի նուագավար Ռոբերտ Մլքէեանը: Յաջորդ տարի իր 30ամեակը բոլորող գեղարուեստական այդ խումբն այսօր ղեկավարում է Երուանդ Վարոսեանը, որն ամէն ինչ անում է դասական երաժշտութիւնը քաղաքի նորահաս սերնդին սիրել տալու համար: Աւելին՝ պայմաններ է ստեղծում, որ նուագախմբի հետ ելոյթ ունենան եւ բեմական փորձ ձեռք բերեն տեղի պատանի երաժիշտները: Իհարկէ, մեծ խնդիր է հիւրախաղերի, ընդհանրապէս շրջագայութիւնների հարցը, որն աւելի դժուարացաւ համավարակի ներկայ պայմաններում: Նուագախումբն առ այսօր չունի իր սեփական շէնքն ու յարմարութիւնները եւ փորձերն ու համերգերն անցկացնում է Ս. Էջմիածնի տեղի ***Հայորդեաց տան***ը: Հիմնանորոգումից յետոյ վերջինիս բացումը տեղի ունեցաւ տարիներ առաջ՝ 2014ին՝ նոր աշխուժութիւն բերելով քաղաքի գեղարուեստական կեանքին:

Հրատապ խնդիր է նաեւ քաղաքի գլխաւոր համերգասրահի՝ ֆիլհարմոնիկ դահլիճի բացակայութիւնը: Մինչեւ երկրաշարժը դասական համերգեր էին կազմակերպւում Ս. Ամէնափրկիչ եկեղեցու ընդարձակ սրահում, որն այլեւս գոյութիւն չունի: Յայտնի էր նաեւ Մանկավարժական ինստիտուտի նախկին շէնքի (այն յայտնի է որպէս Պետական համալսարանի առաջին շէնք, որտեղ այսօր գործում է Գիւմրու տեղեկատուական *տեխնոլոգիա*ների կենտրոնը) համերգային դահլիճը, որտեղ ժամանակին ելոյթներ են ունեցել Պաւէլ Լիսիցեանը, Զարուհի Դոլուխանեանն ու Լուսինէ

[46] Լեւոն Լաճիկեան «Գիւմրիի Մշակոյթի կենտրոնի երկրորդ տարեդարձը», *Ազգ*, 7 Դեկտեմբերի 1993:

Զաքարեանը: Առասպելներ են պատմում այս դահլիճի ինչեղութեան մասին, որն այսօր - վերանորոգումից յետոյ – դադարել է:

Ինչ վերաբերում է խորհրդային տարիներին յայտնի Սեւեանի անուան ***Երկաթուղայինների մշակոյթի պալատ***ին, ապա այն մասնակիօրէն տուժել էր տարերային աղէտից: Ժամանակին այդտեղ ելոյթ էր ունենում գիւմրեցիների շատ սիրած ***Շիրակի պարային համոյթ***ը՝ ղեկավարութեամբ Աղասի Շաբոյեանի: Անտէրութեան մատնուելուց յետոյ կառոյցը թալանուեց, իսկ 1992ի ձմռանը՝ Դեկտեմբերի 28ին, դարձաւ հրդեհի ճարակ[47] ու մինչ հիմա մնում է կայարանամերձ հրապարակում՝ որպէս անհարկի յիշեցում 34 տարի առաջ տեղի ունեցած աղէտի... Նշենք, որ ՀՀ ժողովրդական արտիստ, յայտնի մենապարող Ռուդոլֆ Խառատեանը վերջին շրջանում զգալի ջանքեր է գործադրում այստեղ պարարուեստի միջազգային կենտրոն հիմնելու ուղղութեամբ:

Դեկտեմբերեան երկրաշարժի 30ամեայ տարելիցը Մոցարտի *Ռեքուիէմ*ի ներկայացմամբ նշուեց եւ զոհերի ոգեկոչումը տեղի ունեցաւ Գիւմրու ***Սեւ ամրոց***ում[48], որը պատմական վայր լինելուց զատ հիմնանորոգումից յետոյ նոր շուք է տալիս քաղաքին: Բեմի մեծութեան շնորհիւ այն այլեւս յարմար հարթակ է երաժշտական ու պարային խմբերի միացեալ ելոյթների համար: Այդ խմբերից թուենք ***«Անի» պարային համոյթ***ը եւ ***Գիւմրու ժողգործիքների պեփական նուագախումբ***ը, որոնք յաջողութեամբ պահում-պահպանում են երգուպարի տեղական հարուստ աւանդոյթները: Արդէն 7 տարեշրջան է, որ տարուայ մէջ երկու անգամ հանրապետութեան շուրջ 1000 պարողներ խմբւում են «Սեւ բերդ» համալիրում՝ անցկացնելու «Շիրակի էսքիզներ» հանրապետական պարային մրցոյթ-փառատօնը[49]:

Իդէպ, «Մանսուրեան-80» համերգաշարի վերջին միջոցառումը կայացաւ նոյն համերգասրահում, որից ստացուած ողջ հասոյթը տրամադրուեց Գիւմրու թիւ 4 երաժշտական դպրոցին: Արդիւնքում ստեղծուեց «Մանսուրեան» աշակերտական սենեկային նուագախումբը:

Գիւմրու վերջին 30ամեայ մշակութային դիմապատկերի մասին խօսելիս չես կարող շրջանցել ***«ԳՈՀԱՐ» մշակութային բարեգործական կազմակերպութեան*** արդիւնաւէտ գործունէութիւնը, որը մնայուն հետք թողեց քաղաքի գեղարուեստական տարեգրութեան մէջ: Ստեղծուած լինելով 1999ին պէյրութահայ գործարար եւ բարերար Յարութ Խաչատուրեանի կողմից՝ այն անուրանալի նպաստ բերեց յետանկախութեան ՀՀ մշակութային կեանքին՝ աշխուժացնելով յատկապէս երաժշտարուեստի ոլորտը:

---

[47] Լաճիկեան *Անլոյս օրերի*, էջ 67:

[48] Մանրամասն՝ https://www.facebook.com/162828657258113/videos/347747176067833:

[49] 7րդ շրջանի մասին պատմող տեսանիւթի յղումը՝ https://www.facebook.com/shirakieskizner/videos/385869752282232/ :

Սիմֆոնիկ ու «Գոհար» նուագախմբերի կորիզը կազմում էին տեղի երաժիշտները՝ մօտ 130 հոգի: «Գոհար» սիմֆոնիկ նուագախմբի ու երգչախմբի առաջին գեղարուեստական ղեկավար եւ նուագավար Սեպուհ Աբգարեանի ղեկավարութեամբ նրանք հայ ժողովրդական-գուսանական երգի հմայքը հայաստանցիներին մատուցելուց յետոյ՝ տարան աշխարհի չորս ծագեր՝ Լիբանան, Կիպրոս, Սուրիա, Թուրքիա, ԱՄՆ, Քանատա, Մոսկուա, Լատին Ամերիկայի երկրներ՝ Պրազիլ, Արժանթին, Ուրուկուայ:

Մեծ էր «ԳՈՀԱՐ»ի ներդրումը նաեւ քաղաքի նորահաս սերնդի գեղագիտական դաստիարակութեան գործում՝ ի դէմս 1999ից գործող նոյնանուն երաժշտանոցի: Վերջինիս երաժշտական պատասխանատու Տիգրան Յովհաննիսեանից տեղեկացայ, որ երաժշտանոցը 21 տարում տուել է 130 շրջանաւարտ[50]: Վերջիններից շատերն իրենց ուսումը շարունակել են բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում, ի մասնաւորի ԵԿՊԿ Գիւմրու մասնաճիւղում: Ափսոս, որ այս ամէնի մասին խօսւում է անցեալ ժամանակով, քանզի 2019 Նոյեմբերից «ԳՈՀԱՐ»ը դադարեցրեց իր գործունէութիւնը՝ բարի յուշ թողնելով մարդկանց սրտերում:

Հին պատշգամ քաղաքում

ՆՈՐՕՐԵԱՅ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Գալով նորօրեայ մշակութային զարգացումներին՝ չենք կարող չանդրադառնալ վերջին շրջանի գեղարուեստական այն նախագծերին, որոնց շնորհիւ Գիւմրին տարէցտարի վերածւում է փառատօնային քաղաքի: Այսպէս, 2007ից սկսած այստեղ անցկացւում էր երաժիշտ-կատարողների *«Վերածնունդ» միջազգային մրցոյթ-փառատօնը*, որը շուրջ 10 տարիների

[50] Տուեալներն՝ ըստ Տիգրան Յովհաննիսեանի հետ 2021 Յունիսի 13ին կայացած զրոյցի:

կեանք ունեցաւ եւ նշանաւորուեց հայ ու օտարազգի հազարաւոր մասնակիցների ներկայութեամբ: Այն աչքի ընկաւ յատկապէս նոր տաղանդների յայտնաբերմամբ եւ միջազգային կապերի ստեղծմամբ, որոնք շարունակւում են մինչ օրս:

Գիւմրու համայնքապետարանի մշակոյթի եւ երիտասարդութեան հարցերի բաժնի պետ Լիլիթ Թովմասեանը մէկն է նրանցից, ով ստեղծարար մօտեցում է հանդէս բերում քաղաքի գեղարուեստական աւանդոյթների շարունակութեանը՝ նոր ու երիտասարդական շունչ հաղորդելով դրանց իրագործելիութեանը: Այսպէս, 2019ին սկիզբ առած *«Դասական Ուրբաթ»*ը[51] նոր նախագծերից մէկն է, որի շրջանակներում իւրաքանչիւր ամսուայ վերջին Ուրբաթ օրը արուեստի ասպարէզում առաջին քայլերն անող նոր անունների մասնակցութեամբ կազմակերպւում են ցուցահանդէսներ, որոնք ուղեկցւում են իրենց արդէն հաստատած գեղարուեստական խմբերի դասական կատարումներով:

Սրան գալիս է լրացնելու դարձեալ 2019ին սկզբնաւորուած *«Art Շաբաթ»* դասական երաժշտութեան փառատօնը[52], որի մասնակիցներն են դառնում քաղաքի բոլոր երաժշտական դպրոցների, Կարա Մուրզայի անուան երաժշտական քոլէջի եւ ԵԿՊԿ Գիւմրու մասնաճիւղի սովորողները: Այսկերպ բարձր ճաշակ է թելադրւում ունկնդիրներին եւ միաժամանակ ձեւաւորւում դասական օրակարգ: Վերջինիս, անշուշտ, կը նպաստի ԵԿՊԿի Գիւմրու մասնաճիւղի ***Երիտասարդական կամերային նուագախմբ***ի ստեղծումը նոյն 2019ին (գեղ. ղեկավար՝ Արմէն Կարճեան):

Գիւմրին նաեւ ջազի քաղաք է: Նկատի չունենք միայն ***Hay-at ջազ*** ակումբը, որտեղ պարբերաբար ելոյթներ են ունենում տեղական ու հիւրախաղերի եկած խմբեր: «Ջազը Գիւմրիում» ծրագրի շրջանակներում ամէն տարի 4 օր շարունակ, յատկապէս ամառուայ ամիսներին, ջազային երաժշտութիւնը բացօթեայ հնչում է ողջ քաղաքում, իսկ աւելի ճիշտ՝ Իսահակեանի, Շիրազի, Ասլամազեան քոյրերի եւ Ձիթողցեան թանգարանների բակերում՝ մասնակցութեամբ ՀՀ լաւագոյն երաժշտախմբերի[53]:

Կատակով ասում են՝ գիւմրեցիք Երեւանից «գողացան» ջազը: Իրականում, իհարկէ, այդպէս չէ: Նախ՝ ելոյթ ունեցողների մէջ միշտ էլ քիչ չեն եղել տեղացի երաժիշտները, ապա ջազը ռոքի հետ միասին խորը արմատներ է ունեցել այստեղ եւ դեռ խորհրդային տարիներից են դրանք տարածուած եղել գիւմրեցի պատանիների ու երիտասարդների շրջանում:

---

[51] Նախաձեռնութեան մեկնարկի մասին տե՛ս՝ https://www.facebook.com/206937043356877/videos/697689147344762/ :

[52] Փառատօնի մասին տե՛ս՝ https://www.facebook.com/206937043356877/videos/438474340333158/ :

[53] Փառատօնի մասին տե՛ս՝ https://www.youtube.com/watch?v=hPPwcimXJn8&fbclid=IwAR0YoaTS89gRaNtZ-toWZ2dXGnjjyaKsN1GMWCBdBjKTs0u8paZnzoxYnRI :

Վկայութիւնը վերջերս ռուսերէն լոյս տեսած ռադիօ եւ հեռուստամեկնաբան, քաղաքի երաժշտական կեանքի քաջ գիտակ եւ անմիջական մասնակից Լիւդմիլա Բիլբիլիդիի *Ջազ-ռոքային Լենինական* գրքոյկն է[54], որտեղ հեղինակը հանգամանօրէն անդրադառնում է 1964-88 գործած եւ բարի յուշեր թողած երաժիշտներին ու երաժշտախմբերին՝ «Ծիծեռնակ», «Շիրակ», «Անգին քարեր», «Կիլիկիա», «Արագած», «Ուրարտու», «The Prometheus», «Բիայնա», «Կեանք», «Սփիւռք», «Արեգակ», «Դեղձանիկ», «Զանգակ» եւն.:

Այս առումով չենք կարող չառանձնացնել ***Բամբիռ*** ռոք խումբը, որը Գիւմրիում կազմաւորուել է 1978ին, եւ առ այսօր շարունակում է տեղական ու արտասահմանեան բեմերից հնչեցնել Գիւմրուայ ռոքի ելեւէջները: Չնայած սերնդափոխութեանը՝ տակաւին բեմի վրայ է խմբի հիմնադիր, երգահան, մենակատար եւ կիթառահար «Ջազը»՝ Գագիկ Բարսեղեանը: Նրա ղեկավարութեամբ Բամբիռը բազմաթիւ մրցանակներ է շահել միջազգային ռոք փառատօներում, մասնակցել Eurovoice 2010 մրցոյթին, սկաւառակներ թողարկել ԱՄՆում: Նշենք նաեւ, որ 2016ի Մայիսից Գիւմրիում գործում է ***Ռոք դպրոց*** (հիմնադիր՝ Ժիրայր Մարտիրոսեան), որտեղ ուսում է ստանում եւ հասակ առնում ռոքասէրների նոր հերթափոխը: Իր հայրենի քաղաք յաճախակի է այցելում ու համերգեր տալիս հանրայայտ դաշնակահար Տիգրան Համասեանը:

Չմոռանանք նաեւ *«Դալան ֆեստ»* եռօրեայ ռոք փառատօնը Գիւմրիում՝ հովանաւորութեամբ ՀՀ մշակոյթի նախարարութեան: Այսկերպ փորձ է արւում վերականգնելու քաղաքի դալանների՝ կամարների տակ ռոք նուագելու մոռացուած աւանդոյթը: Միաժամանակ այն լաւագոյն օրինակն է մշակութային երեկոները հանելու համերգասրահներից եւ աւելի հաճելի ու մատչելի դարձնելու հանրութեան լայն շերտերին:

Այո՛, մշակութային պատշաճ միջավայրի առումով Գիւմրին իսկապէս անմրցելի է եւ այսօր իր հաւասարը չունի ՀՀում:

Յիշարժան է անցնում նաեւ իւրաքանչիւր տարուայ Յունիսի 1ը՝ Երեխաների պաշտպանութեան միջազգային օրը, երբ *«Արի՛ դուրս»* կարգախօսով Գիւմրու 7 տարբեր հարթակներում միաժամանակ անցկացւում է բակային խաղերի փառատօն[55]:

Յետերկրաշարժեայ ողջ ընթացքում մէկ օր անգամ չդադարեցրեց իր գործունէութիւնը ***Գեղագիտութեան ազգային կենտրոնի քաղաքային մասնաճիւղ***ը, որը մինչ օրս զբաղուած է մանկական արուեստի զարգացմամբ եւ պարման-պարմանուհիների գեղագիտական դաստիարակու-

---

[54] Людмила Билбилиди, *Джаз роковый. Ленинакан (1964-1988)* (Ջազ-ռոքային Լենինական), Էլդորադօ հրատ., Գիւմրի, 2017:

[55] Տեսանիւթի յղումը՝ https://www.facebook.com/206937043356877/videos/2332732896948475/ :

թեամբ: Ուրախալի է, որ Գիւմրիում գործող 6 երաժշտական եւ 2 արուեստի («Վարդուհի», «Ժան եւ Ալպէր Պօղոսեան») դպրոցներում աճում է տաղանդաւոր նոր սերունդ՝ որպէս հնի արժանաւոր հերթափոխ: Աւելին՝ մասնաւորապէս «Օյունջեան» բարեգործական հիմնադրամի *«Վարդուհի»* արուեստի դպրոցում, որն ընդամէնը 7 տարուայ պատմութիւն ունի, լուրջ քայլեր են արւում «մայրաքաղաքային» արուեստ համարուող բալէտի վերադարձը «հայրաքաղաք» ապահովելու ուղղութեամբ: Մասնագէտները, ի մասնաւորի ՀՀ ժողովրդական արտիստ, Վիեննայի օպերայի ու բալէտի թատրոնի նախկին մեներգչուհի Յասմիկ Պապեանն արդէն բարձրաձայնում են քաղաքում օպերայի ու բալէտի սենեկային թատրոն հիմնելու անհրաժեշտութեան մասին:

Գիւմրին ***Էրգրի*** տարբեր ձգողութիւն ունի

Յիրաւի, շնորհիւ պետական ու հասարակական տեղական կառոյցների եւ անհատ նուիրեալների միացեալ ջանքերի, օրէցօր փոխւում է Գիւմրու դէմքը՝ դառնալով աւելի հրապուրիչ ու գրաւիչ: Այսպէս, Հայոց Յեղասպանութեան ինստիտուտ-թանգարանի նախկին տնօրէն եւ Գիւմրի-20/25 նախաձեռնութիւն-հիմնադրամի համահիմնադիր Հայկ Դեմոյեանի ջանքերի շնորհիւ վերջին մէկ տարում ստեղծուեցին ***Հայուհի*** եւ ***Հայկական խորհրդանշաններ*** թանգարանները: Աշխատանքներ են տարւում նաեւ ***Լուսանկարչութեան*** եւ ***Սպորտի*** թանգարաններ հիմնելու ուղղութեամբ:

Հետաքրքիր նախաձեռնութիւնների հեղինակ է «Շիրակ կենտրոն» հասարակական կազմակերպութեան նախագահ Վահան Թումասեանը[56]: Գիւմրու հին ու նոր հատուածների խաչմերուկում 2014ին նա բացել է *«Շալէ»* հիւրատուն-թանգարանը՝ յաջողութեամբ իցոյց դնելով քաղաքային ա-

[56] Ըստ Վ. Թումասեանի, ում ղեկավարած կազմակերպութիւնը տարիներ շարունակ զբաղուած է տնակազերծ Գիւմրի ունենալու ուղղութեամբ, մեր զրոյցում նշեց, որ այսօր՝ երկրաշարժից 33 տարի անց, 2500 ընտանիք դեռ ապրում է կիսաքանդ շէնքերում ու վագոն-տնակներում:

ւանդական մշակոյթը: Նա, իդէպ, ունի հին լուսանկարների ամենահարուստ հաւաքածուն, ուր ցոլանում են ողջ տարածաշրջանի՝ ի մասնաւորի Կարսի եւ Ալեքսանդրապոլի քաղաքային կենցաղն ու նիստուկացը: 2022ին ամբողջութեամբ կ'աւարտիուի նրա ձեռնարկած գիւղական զարգացման նոր ծրագիրը Շիրակի մարզի սահմանամերձ Բագրաւան համայնքում: Շնորհիւ սփիւռքահայ բարերարների՝ այդտեղ կառուցուել են մատուռ, այգի եւ հիւրատուն-թանգարան:

Ինչպէս մեր զրոյցում նշեց Լիլիթ Թովմասեանը. «2019ը *վերելքի ու աննախադէպ աշխուժութեան շրջան էր Գիւմրիի համար*»: Դրան, իհարկէ, մեծապէս նպաստեց ՀՀ կառավարութեան որոշումը ՀՀ անկախութեան տօնը ամէն տարի որեւէ մարզում նշելու մասին: Նոյն 2019ին այդ պատիւն առաջինը վերապահուեց Գիւմրիին, որը ՀՀ անկախութեան տօնին՝ 2019 Սեպտեմբերի 21ին, ընդունեց շուրջ 15 հազար մարդու՝ ՀՀ միւս մարզերից, ինչպէս նաեւ արտերկրից[57]:

Քաղաքային իշխանութիւնները լծուած են զբօսաշրջութեան զարգացմանն ուղղուած նոր նախաձեռնութիւններ հանդէս բերելուն: Այսպէս, տեղի կայարանամերձ հրապարակում վերջերս, որպէս թանգարանային նմուշ, դրուեց 1899ին Գիւմրի մտած առաջին շոգեքարշը, որը համընդհանուր հետաքրքրութիւն առաջ բերեց տեղացիների ու հիւրերի շրջանում: Ամէն շաբաթավերջի հարիւրաւոր զբօսաշրջիկներ հեղեղում են քաղաքի պատմական միջուկը՝ զարկ տալով ներգնայ զբօսաշրջութեանը: Ըստ Իսահակեանի տուն-թանգարանի տնօրէն Կարինէ Վիրաբեանի[58], 2019ին նախորդ տարուայ համեմատ իրենց այցելուների քանակն աւելացել է 3-4 անգամ: Ու քանի որ պահանջարկը առաջարկ է ծնում, քաղաքում օրէցօր աւելանում է պանդոկների ու հիւրատների թիւը:

Քաղաքի զբօսայգիների բաց հարթակների վրայ ու փողոցներում այսօր յաճախակի կարող ես լսել փողային նուագախմբերի ելոյթներ. այս կերպ վերականգնւում է այն վաղեմի աւանդոյթը, որով միշտ էլ յայտնի է եղել Գիւմրին:

Նախատեսւում է, օրինակ, Ազնաւուրի հրապարակի հարեւանութեամբ գտնուող ***Բարեկամութիւն*** այգու վերակառուցումը, որտեղ ժամանակին 2 բացօթեայ բեմահարթակներ են եղել: Մօտ 10 մլն. դոլար արժողութեամբ այդ նախագծի հեղինակն է Զբօսաշրջութեան եւ քաղաքաշինութեան բարեգործական հիմնադրամը (հիմնադիր՝ Ռուբէն Վարդանեան): Շուտով այգին կ'ունենայ այգեգործութեան դպրոց, ցուցահանդէսային շէնք, նաեւ հանգստի տաղաւարներ մեծերի ու փոքրերի համար: Միաժամանակ աշնանը նախատեսւում է այդտեղ կազմակերպել *«Վարպետ» մրցոյթ-փառա-*

---

[57] Լեւոն Լաճիկեան «Գիւմրին մանրամասն սիրելու քաղաք է», *Եթեր շաբաթաթերթ*, 19 Սեպտեմբերի 2019:

[58] Զրոյցը կայացել է 2021 Յուլիսի 15ին:

գոն, որի հիմնական նպատակը արհեստագործական մասնագիտութիւնների պահպանումն ու զարգացումն է, հանրային գիտակցութեան մէջ աշխատաւոր մարդու նկատմամբ յարգանքի վերականգնումն ու հեղինակութեան բարձրացումը:

Այլ ծրագրերի համաձայն էլ ապագայի Գիւմրին վերածուելու է բնապահպանական տեսակէտից մաքուր ու կանաչ քաղաքի՝ բազմաթիւ լճակներով ու նոր այգիներով:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Մշակութային ներկայ զարգացումների իմաստով պայծառ ու յուսադրող է Գիւմրու վաղուայ օրը: Եւ որքան էլ համավարակն ու արցախեան վերջին պատերազմը մթագնեցին ու յետաձգեցին շատ ծրագրեր, քաղաքը դուրս է եկել աննախադէպ վերելքի ու առաջընթացի լայնահուն ճանապարհ:

A BRIEF OVERVIEW OF GUMRI'S CURRENT CULTURAL LIFE

(Summary)

LEVON LACHIKYAN (levon.lachikyan55@gmail.com)

Gumri has a past history of thousands of years. However, its history can be split into two, due to the earthquake of 1988, which ruined a large section of this second city of Soviet Armenia and caused the death of over 35.000 inhabitants. Notwithstanding this catastrophe, the city did not collapse. On the contrary it pulled itself together and, after a short lull, reshaped its cultural life and registered outstanding novelties in arts and culture.

The author, a native of Gumri, has been witness to and a participant in the resurgence of cultural Gumri since the proclamation of the Republic of Armenia in 1990.

Taking a retrospective view, the paper presents a panoramic picture of Gumri and its cultural achievements, ups and downs, changes in the past thirty years and future prospects.

The author notes that Gumri has preserved the ethos of its past history. In fact, the city has conserved traditions of the past. Furthermore, having been a bridge from Western to Eastern Armenia and due to its closeness to the famous pre-1920 city of Gars, large numbers of Armenian refugees and survivors of the Armenian Genocide settled in Gumri. These added further cultural colors to the city and gave Gumri a unique cultural character, which is being developed in its own right. Indeed, the current features of the city are the natural continuation of its past with some added modern taste and twist. These unique traditional features have attracted thousands of tourists from both other places in Armenia and the whole world.

The paper focuses on certain cultural forms in the city, including theater, painting, sculpture, music, and crafts, and concludes that the current cultural rhythm of this developing cultural city promises a positive future for the city.